ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2022 թվականի N 181-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 06-Ի N 155-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետի *(վարչության պետի պաշտոնակատարի)* 2022 թվականի մայիսի 24-ի N Ն/558-2022 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2022 թվականի մայիսի 06-ի *«Աշխատանքային խումբ ստեղծելու մասին»* N 155-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Ձորաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և «Պոռշյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ կազմակերպություն) 2022 թվականի մայիսի 16-ից հունիսի 01-ը ներառյալ»*** բառերը փոխարինել ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Պոռշյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններում և «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ կազմակերպություն) 2022 թվականի մայիսի 16-ից հունիսի 02-ը ներառյալ»*** բառերով:

2) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի մայիսի 27
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի մայիսի 27-ի N 181-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի մայիսի 06-ի N 155-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/հ	Բժշկական կազմակերպության և ընկերության անվանումը	Ուսումնասիրության ժամանակահատվածը
1	«Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	2022 թվականի մայիսի 16-ից 18-ը ներառյալ
2	«Պռոշյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	2022 թվականի մայիսի 23-ից 25-ը ներառյալ
3	«Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերություն	2022 թվականի մայիսի 30-ից հունիսի 02-ը ներառյալ

»: